ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունիսի 2016 թվականի N 523 - Ա

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ՝ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 3-րդ ենթակետի՝

1. ԱՄՆ Սիլիկոնյան հովտում, «Սինոփսիս»-ի Մաունթին Վյու կամպուսում «ԱրմԹեք» գլոբալ ամենամյա համաժողովի շրջանակում տեղի ունենալիք «Հայաստանի SS ֆորում»-ին և Լոս Անջելեսում կայանալիք գործարար համաժողովին մասնակցելու նպատակով 2016 թվականի հունիսի 8-14-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Սան Ֆրանցիսկո և Լոս Անջելես) պատվիրակության անդամների՝ համաձայն հավելվածի, գործուղման հետ կապված ծախսերը կատարել.

Արծվիկ Մինասյանինը, Էմիլ Տարասյանինը և Արմեն Այվազյանինը՝ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

2. Ընդունել ի գիտություն, որ Կարէն Մկրտիչեանի Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Սան Ֆրանցիսկո և Լոս Անջելես) գործուղման հետ կապված ծախսերը կատարվել են Հայաստանի զարգացման հիմնադրամի միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնել Ամերիկայի Միացյալ Նահանգներ զործուղման արդյունքների մասին հաշվետվությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. հունիսի 21
Երևան

523v.voroshum

Հավելված
ՀՀ վարչապետի 2016 թ.
հունիսի 21-ի N 523 - Ա
որոշման

ԿԱԶՄ

2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-14-Ը ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ՄԵԿՆԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ

Ա. Մինասյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարար (պատվիրակության ղեկավար)
Է. Տարասյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա. Այվազյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի միջազգային տնտեսական համագործակցության վարչության պետ
Կ. Մկրտիչեան	- Հայաստանի զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն (10.06.-14.06.2016թ. համաձայնությամբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

523v.voroshum